

7543



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
Ա. ՄԱՋՄԱՆՅԱՆ



«26» 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0093-21

Ձեռնարկողը՝

«Մալխասյանց 12» ԲԲԸ
Ք. Երևան, Մալխասյանց 6/1

Գործունեությունը՝

**Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց
6/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի և
ավիրոհանգրվանային մասնաշենքի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր
Երևան քաղաք**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

թիվ ԲՓ 0093-21

<26> 052021թ.

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց 6/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Մալխասյանց-12» ԲԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

«Մալխասյանց-12» ԲԲԸ կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց 6/1 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի շենք և ավտոհանգրվանային մասնաշենք:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2021թ փետրվարի 8-ի N01/18-07/217-Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.48125հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախագծվող բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման համար տրամադրված հողամասը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսային մասում, Արաբկիր վարչական շրջանի տարածքում, Մալխասյանց, Մամիկոնյանց և Արղության փողոցների միջանկյալ մասում: Հողատարածքը հիմնականում հարթ է, ունի ոչ մեծ թեքություն: Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ իրականացված ուսումնասիրությունների, հորատման և լաբորատոր տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի



երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով, չորրորդական հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներով:

Շտազոտության տվյալների՝ համաձայն կառուցապատող տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն նախնական գնահատման հայտի գործունեության տարածքն ամբողջությամբ կառուցապատված է, որոնք ենթակա են քանդման: Առկա են՝

- արտադրամաս-2485.2քմ,
- մեխանիկական արտադրամաս - 583.6քմ,
- պահեստ - 8.7քմ,
- ավտոտնակներ - 209.9քմ,
- կաթսայատուն - 13.69քմ,
- շինություններ - 38.01քմ, 10.18քմ, 0.6քմ, 16.8քմ,
- պարիսպներ - 25.4քմ, 19.2քմ, 1քմ,
- ծածկ-27.9քմ:

Կից՝ 13-35մ հեռավորությամբ գտնվում են բնակելի, հասարակական և արտադրական շինություններով ծանրաբեռնված հողամասեր:

Համաձայն հայտի նախատեսվող կառույցը բաղկացած է երկու մասնաշենքերից՝ բազմաբնակարան բնակելի շենքից և բազմահարկ ավտոհանգրվանից: Բազմաբնակարան բնակելի շենքը հատակագծում ուղղանկյունաձև է և առաջին հարկում ունի 53.34մ x 20.96մ չափեր: Բազմաբնակարան բնակելի շենքն ունի մեկ ստորգետնյա, 14 վերգետնյա հարկ: Ստորգետնյա հարկը նախատեսված է, որպես թեքուղիով առանձին մուտքով 20 մեքենայի համար նախատեսված կայանատեղի, այստեղ են տեղադրվելու ջրի ռեզերվուարը և պոմպակայանը:

Առաջին հարկում նախատեսվում են շենքի գլխավոր մուտքերը, երկրորդական էվակուացիոն ելքերը, ինչպես նաև գրասենյակային տարածքները: Երկրորդ հարկից (+5.70 նիշ) սկսած հարկերը տիպարային են: Ամեն հարկում նախատեսված են 12 բնակարան՝ 6 բնակարան յուրաքանչյուր աստիճանավանդակում: Աստիճանավանդակի դռները հակահրդեհային են:

Ավտոհանգրվանի մասնաշենքը ունի ստորգետնյա մեկ և վերգետնյա 5 հարկեր, վերջինս հատակագծում ուղղանկյունաձև է և հատակագծային կիսակլոր թեքուղիով: Նախատեսված է 144 մեքենայի համար, բնակելի շենքի հետ կապված է ստորգետնյա կապով, որտեղ նույնպես տեղաբաշխված է 14 մեքենայի կայանատեղի և աստիճանավանդակ:

- Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝
- Հողատարածքի ընդհանուր մակերես - 4812.5քմ,
- Կառուցապատման մակերես - 2887.5քմ,
- Կանաչապատման մակերես - 1925քմ,
- Բնակարանների ընդհանուր թիվը - 150,

Ավտոկայանատեղիների ընդհանուր քանակ 178,
Նախատեսված է նաև մայթի բարեկարգում:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրի շրջակա կառույցներին:

Համաձայն տրամադրված էներգաարդյունավետության սերտիֆիկատի շենքի նախագծային էներգետիկ բնութագիրը սահմանված է A+ դասի:

